

**Տ. ՀՈՎՆԱՆ ԱԲԵՂԱ ՀԱԿՈՒՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(10 հուլիսի 2005 թ.)

*«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ
որ խնդրեք Իմ. Հորից Իմ անվամբ, կորովի
ձեզ»:*

(Յովհ. ԺԶ 23)

«Յանուն Հոր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. ամէն»:

Մարդկային գերագույն պարականությունների մեջ իր արժեքներով ամենանվիրակա-
նը իր սրբությամբ և իր ներգործությամբ՝ սրտաբուխ աղոթքն է: Այն մեր հոգու մարմնի ան-
առիկ բերդն է, երկնքից մեզ փրկած եզակի ամանձնաշնորհումը, որը իրավունք է փալիս
մեզանից յուրաքանչյուրին հաղորդակցվելու գերագույն իմաստության հետ, որն է երկնա-
վոր Հայրը: Անգնահատելի պատիվ է, որը չի բաղդարվում աշխարհային պատիվների հետ,
անկողողալելի գանձ է, որը չի չափվում երկրի գանձերի հետ:

Բարոյական արժեքները գնահատող հավատացյալի համար որքան մեծ պատիվ է խո-
սել Աստծո հետ, յուրաքանչյուր վայրկյան մեր ուզած չափով ու մեր ուզած կերպով: Արա-
քածը իր Արարչի հետ խոսում է առանց նախօրոք ժամադրվելու, օրվա ցանկացած պահին,
և դա մեծագույն պատիվ է աղոթող մարդու համար, որի սիրտը լցվում է մեծ ուրախությամբ
և ցնծությամբ, խոսել ազատորեն և մտերմորեն թագավորների թագավորի հետ, և գիտե՛ք,
ով է այդ խոսողը: Անշուշտ, մահկանացու մարդն է խոսում անմահ Աստծո հետ:

Աստվածային այս ունկնդրությունը հոգիների համար մեծագույն շնորհ է: Ամենագոր
Տերը իրավունք է փվել երկնքի բոլոր արարածներին, որ Իրեն Հայր կոչեն, իրավունք է փվել,
որ մեծ ու փոքր բացեն իրենց սրտերը Իր առջև, պարմեն իրենց նեղությունները, խոստո-
վանեն իրենց մեղքերը և ապավինեն Աստծո պաշտպանությանը: Ուրեմն վարահենք Աստծո
սիրուն, հնազանդվենք Տիրոջ կամքին և սրբությամբ գործադրենք Տիրոջ իսկ կողմից փրկված
պարվիրանները:

Թագավորի հետ խոսելու համար պետք է արարնություն ստանալ, մինչդեռ Աստծո հետ
կարող ենք խոսել ցանկացած պահի՝ եկեղեցում թե փանը, ճանապարհին թե աշխարա-
վայրում, ճանապարհորդության ընթացքում կամ դաշտի մեջ, խոսել անկաշկանդ սրտով:
Աստված միշտ հոժար է լսել մեր աղոթքները, ուր և ինչ պայմաններում էլ կատարվեն
դրանք: Լսում է անձանձրույթ, որքան էլ երկար լինի և քանի անգամ էլ կրկնվեն դրանք օր-
վա մեջ: Եթե ավագակը թալանում է մեր փունը, հուզվում ենք, ջանք և եռանդ չենք խնայում
մեր ունեցվածքը երբ վերադարձնելու, սակայն ուշադրություն չենք դարձնում, որ մեր մեջ
թողնում ենք սարանային ազատ գործելու: Իր ուզածը վերցնում է, մերկացնում է մեր հոգի-
ները երկնափու շնորհներից: Ավագակին ձերբակալելու համար օգնում ենք իրավապահնե-

րին, մինչդեռ սապրանային ազատ ու անպարտ ենթ թողնում և թաքցնում ենք մարդկության րեսությունից:

Առաքինություններից կողոպտված մարդը կուրանում է: Կուրանում է խղճով և արդա-րությամբ, չի կարողանում ճանաչել անանց արժեքները, որը Աստծո լույսի մեջ է պահում իրեն: Աստծո է բարին, անարգում է սրբությունը, ծաղրում է աղոթքը և անսխալում է կյանքը գեղեցկացնող ամեն րեսակի նվիրականություն, մոլորություններով հպարտանում է, հա-կառակություններով սնվում, անհավարարմությամբ պարծենում և հավիշակությամբ պա-հում է ինքն իրեն: Նախընտրում է առաքինության փոխարեն՝ արաքը, սրբության փոխա-րեն՝ մեղքը, և մաքրության փոխարեն՝ ցեխը:

Սրբաբուխ աղոթքը մեր բարոյական առաքնաբանության է, որը երբեք չի պակասում, աճում է օրըստօրե և դառնում անկշռելի՝ իր արժեքով, և անգերազանցելի՝ իր ներգործած ուրախու-թյամբ: Աղոթքը յուրօրինակ առանձնաշնորհում է, որի արժեքը Քրիստոսի հավաքարիմ հեկոնորդները միայն կարող են հասկանալ և գնահատել: Ահա դա է պարճառը, որ մահկա-նացու մարդիկ կյանքի մեջ դարձել են մեծ, սուրբ, հաղթական և անմահ: «Ո՛վ է համար-ձակվում ասել, թե ինքը աղոթքի կարիք չունի», - հայտարարեց Փրանսիացի մեծանուն մրա-ծողը, որը նախապես թերահավատ էր եղել և իր գրած գրքերի մեջ արտահայտել էր այն միտքը, թե աղոթքը ժամանակի կորուստ է, աղոթքը ժամանակի վատնում է, բայց իր կյան-քի ունեցած ծանր փորձությունը նավաբեկության ընթացքին երկյուղի մեջ նա առաջինը եղավ, որ ծնկի եկավ և օգնություն հայցեց բազմագույն Փրկչից:

Աղոթելը ճշմարիտ քրիստոնյայի համար ամենանվիրական պարականությունն է: Աղոթողի սիրտը լցվում է հավաքով, հույսով և սիրով, և ով աղոթել գիտի, նա երջանիկ մարդ է, որովհետև նա ունի իր դժբախտության պահին մի անփոխարինելի բարեկամ, Ով լսում է իր աղոթքը, մխիթարում և օգնում է իրեն, բայց աղոթքի այս վերըմբռնումը հասու է նրան, ով աղոթում է: Աղոթքը երջանկություն է շնորհում նրան, ով իսկապես կարող է աղո-թել:

Արդ, սիրելի հավաքավոր և հավաքակից ներկաներ, եկեք՝ աղոթենք սուրբ սրտով ամեն օր, թե՛ ուրախության և թե՛ րիստության պահերին, որպեսզի ողորմած Տերը խրախու-սի և գորացնի մեզ օրըստօրե: Այժմ և հավիշյանս հավիտենից, ամեն: